

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱՅ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՄԵԱՅ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1910 - 1912




1914

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՏՊԱՐԱՆ
Մ. ՅՈՒՂԱԿԻՄԵԱՆ
ՀԵՌԱԺԱՅՆ՝ ՊՕԼԻՍ 561

361
Կ-23

361
Q-23 uf



СОВЕТСКИЕ ДЕВУШКИ



509
39

31.01.2013

92.670



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1910-1912 ՇՐՋԱՆՆԵՐՈՒ

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ ԴԻԻԱՆԻՆ
ԵՒ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎԻՍ ԿԱԶՄԸ

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ 910
Հոկտ. 23-ի իր Ը. նիստին մէջ կազմած էր իր ղեկանը, ինչպէս
Գործ. Ժողովս հետեւեալ անդամութիւններէ.

ԴԻԻԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

Տիկիներ	Սեդարին Տէր. Շահապազ (Ա.սեկապէս)
	Արաֆսի Ասուածասուր (Դեր Ա.սեկապէս)
Օրիորդներ	Ասրինե Տօնէլեան (Ա.սեկապէս)
	Արաֆսի Գալբաբեան (Դեր Ա.սեկապէս)

ԳՈՐԾ. ԺՈՂՈՎ

Տիկիներ	Զարուհի Գալմեանեան (Ա.սեկապէս)
	Արեակունի Թեոդիկ (Դեր Ա.սեկապէս)
	Հայկանոյց Մառ. (Ա.սեկապէս)
	Էօթենի Տէր Ազարեան (Դեր Ա.սեկապէս)
	Բարիս Տօր. Անեմեան (Գաւառապէս)
	Լուիզ Ղազարսեան (Հաւաքապէս)
	Արիզնազ Մարտիկեան (Խորհրդակալ) և
Օրիորդ	Արուսեակ Քաշեան (այժմ Տիկ. Տօր. Մալխաս)

որոնցմէ Տիկնայք Տէր Ազարեան, Մարտիկեան և Օր. Թաշեան առա-
ջին չըջանին սկիզբէն իսկ հրաժարեցան, և Գործ. Ժողովս Ընկերու-
թեան ընթացիկ գործերը վարեց հինգ անդամութիւններով, և իրեն



աջակից ունենալով խորհրդական Յանձնախումբ մը հետեւեալ անձե-
րէն բաղկացած .

Տեարֆ Գրիգոր Ֆերհաս
Նուանդ Նուսուֆեան
Լեւոն Տեմիրիպաշեան
Հմայեակ Խոսրովեան
Մելիք Ղազարոսեան
Ոսկան Մարտիկեան

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾ . ԺՈՂՈՎԱԿԱՆ պաշտօնի կոչուելու վաղորդայնին՝ Ընկերու-
թեանս ընթացիկ գործերուն արագ, զիւրին և կանոնաւոր կատարման
համար պէտք զգաց կազմակերպուած կանոնաւոր գրասենեակ մը
ունենալու, կեդրոն տեղ մը, վայելուչ Ընկերութեանս զիրքին և
անուան : Այս գրասենեակը պիտի ունենար իր փնայուն զիւանա-
ղապրուհին, ինչ որ կարելի եղաւ իրականացնել քիչ վերջը : Այսպէս
Ընկերութեանս կեդրոնատեղին հաստատուեցաւ Բերա, Մեծ Փողոց
թիւ 127 Գուրգո Արարդեան, Ա. յարկաբաժին :

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՅԹՆԵՐԸ ԱԻԵԼՅՆԵԼՈՒ ԶԵՌՆԱՐԿ
ԵՒ ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾ . ԺՈՂՈՎԱԿԱՆ քանակիւր եղաւ նախ Ընկերութեանս մասնա-
ճիւղերը բազմացնել, այս կերպով աւելի արդիւնք ձեռք բերել,
կարելի եղածին չափ ընդարձակելու փափաքով Ընկերութեանս գոր-
ծունէութեան սահմանը, քանի որ որքան Հայաստանի, նոյնքան ալ
Կիլիկիոյ խորքէն աղքատիկ հայ ազգակց զատկարարութիւն տալու
խնդրանքները յարաճուն կերպով բազմացած էին : Այս մտք, Գործ .
Ժողովս յատուկ շրջաբերականներով ղիմումներ կատարեց քսանէ
աւելի կարեւոր կեդրոններու առաջնորդութեանց կամ Թաղ . Խոր-
հուրդներու, թէ՛ գաւառներու և թէ՛ արտասահմանի մէջ, որպէս զի
նոր մասնաճիւղեր կազմուին : Այս և կրկնակի ղիմումներու արդիւն-
քով, Ընկերութիւնս բախտ ունեցաւ նոր մասնաճիւղեր ունե-
նալու :

ԱԶԳԱՆՈՒԹԵՐ ԴԵՌԱՏԻ ՀԱՅՈՒՅԻՆԵՐՈՒ
ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

ԳՈՐԾ . ԺՈՂՈՎԱԿԱՆ մասնաւոր գոհունակութեամբ մը կը յիշատակէ
Ազգանուէր զեռաստի Հայունիներու կազմակերպած վիճակահանու-
թիւնը, որ 1911 փետրուարին մէջ տեղի ունեցաւ Բերայի Արուեստա-
նոցին սրահը, մեծ յաջողութեամբ, Ընկերութեանս բերելով 50 ոսկւոյ

զուտ հասոյթ մը, արդիւնք կազմակերպիչ օրիորդներու եռանդուն և
անձնուէր աշխատութեանց : Արդարեւ այս վիճակահանութիւնը կազ-
մակերպող

Օրիորդները՝ Լուիզ Պառաւեան (Ասենայեցե) ,
Ասիկն Թեֆեան (Ասենայիւր) ,
Արեալոյ Պեօրեկեան (Գանձայեցե) ,
Էմմա Ասասուր (Համարակալ) ,
Աղանի Թազուրեան (Գոյֆայան) ,
Արմինէ Մելիքեան
Նուարդ Ղուկասեան և
Նարեկի Փանոսեան

զիչերը ցորեկին խառնելով և ամէն զուտ ափ առնելով, իրենց գաւառի
բախտազուրկ ազգակցունիներուն համար ամէն զոհողութիւն ըրին,
կարելի եղածին չափ արդիւնաւոր ընծայելու իրենց յանձնառութիւնը :

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՂԵՐԸ

ԱՅՍ ԾՐՁԱՆԻՆ Ընկերութեանս մասնաճիւղերուն թիւը բարձ-
րացաւ 9-ի . — Աղեքսանդրիոյ և Կարնոյ մասնաճիւղերուն վրայ
աւելնալով Գարատուրան, Զմիւռնիա, Թալաս, Մարաշ, Մուշ,
Պուքրէշ :

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԱՍՆԱՃԻՂ

(Կազմուած 1909 Հոկտ.)

Անդամներն են

Տիկիներ Գալթայեան Խան Զարուհի (Ասենայեցե) ,
Սպենչեան Լիւսի (Ասենայիւր) ,
Մերամբեան Արմինէ (Գանձայեցե) ,
Կամսարական Գալիմիկ
Մուրաֆեան Նունէ

Ծանօթ և յարգելի տիկիներէ կազմուած այս մասնաճիւղը
Ընկերութեանս վերակազմութենէն ի վեր, բոլորանուէր ջանքերով
զլիաւոր սատարը եղած է կեդրոնիս որքան իր նիւթական աջակցու-
թեամբ, նոյնքան ալ իր բարոյական ազդեցութեամբ, մասնակցու-
թեան լայն բաժին մը ունենալով ընդառաջ ռուսումնասէն հայու-
հիներու զատկարարութեան փրկարար գործին մէջ : Գործ . Ժողովիս
պաշտօնավարութեան լրումին հետ սակայն, այս կարեւոր մասնա-
ճիւղը կազմող Տիկիները յոգնութեան հետեւանքով հրաժարեցան և
զժրախտաբար կարելի չէ եղած իրենց յաջորդները գտնել տեղոյն մէջ :

ԳԱՐԱՏՈՒՐԱՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Կազմուած 1912 Ապրիլ)

Գարատուրանի մէջ եւս կազմուած է փոքր մասնաճիւղ մը . և սակայն իր գործունէութեան նկատմամբ բաւարար տեղեկութիւն չունենալով՝ այդ մասին պիտի խօսուի յաջորդ տեղեկագրով : Ըսենք միայն թէ այս մասնաճիւղը կոչուած է օժանդակելու տեղւոյն մէջ Ընկերութեանս հիմնած վարժարանին :

ԶՄԻՒՆԻՈՅ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Կազմուած 1911 Մարտ)


Անդամներն են

Տիկիներ	Տ. Աւնան	(Ա. Եւնան)
Օր.	Թ. Խանգեան	(Ա. Եւնան)
	Գ. Պուպի	(Գ. Եւնան)
	Ս. Ասլան	
	Զ. Պաքուեան	
	Վ. Պարսիզպանեան	
	Ս. Պարոնեան	
	Զ. Սվալի	
	Հ. Հեմիսե	

Ընկերութիւնս Զմիւռնիոյ նման կարեւոր կեդրոնի մը մէջ իր մասնաճիւղին կազմութիւնը մասնաւորաբար կը պարտի Գործ. Ժողովիս Խորհր. Յանձնախումբի անդամներէն՝ Ոսկան Էփէնտի, որ այդ քաղաքը այցելելու պատահութեան օգտուելով՝ մղում տուաւ մեր այս նպատակաւ առաջնորդ Տ. Մաթէոս Մ. Վրդ. Խնձէհանի մօտ կատարած դիմումին, և Նորին Գերապատուութեան ինչպէս նաեւ Իգմիրի հեղինակաւոր դէմքերէն Ասպետ Պուպի Էփ. Ի հետ յաջողեցաւ ընկերութեանս շուրջ բոլորել տեղւոյն հայութիւնը, Ազգանուէրի նպատակը բացատրելով յատուկ բանախօսութիւններով : Մեր այս մասնաճիւղին կազմութեան օժանդակեց նաեւ տեղական «Դաշինք» օրաթերթը որ իր սիւնակները լայնօրէն բանալով՝ զգացուց Իգմիրի Հայութեան մօտ Ազգանուէրի աջակցութեան պէտքը, ինչպէս կ'երեւի ստորեւ քաղուած իր հրատարակութիւններէն, որոնց համար քաղցր պարտականութիւն կը համարինք հրապարակաւ եւս յայտնելու մեր շնորհակալիքը :

«ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՆՆԵՐ անխուսափելի ազգային պէտք մըն էր և անբաժանելի զուգադիւրը ՀԱՅՈՒՆ ՄԻԱՅՆԱԼԻՆ, և եթէ կ'ուզէք հայութեան աղջիկ զաւակը, որ նոյնպէս վերածնած է հայութեան աւեր օճախներուն գիրկը : Ան իրեն համար տաք խանձարուր կ'ուզէ

ԳԱՐԱՏՈՒՐԱՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ



ձենէ, հայեր, տուէ՛ք անոր. ա՛ն, ձեր սրտէն փրկած հայ աղջիկը, իր հարսնութեան օժիտը կ'ուզէ ձենէ, իզմիրցիներ, ձեր պատինէ, կրնա՞ք թողուլ, կրնա՞ք լքել զինքը. . . :

«Ահա՛ թէ ինչո՛ւ համար, Հռիփսիմեանցի բեմէն կիրակի օր այնքա՛ն վեհօրէն մեղի կը խօսէր Ոսկան էֆ. , յափշտակուած իր առաքելական կոչումին մէջ, յափշտակելով և տանելով մեր սրտերը հոն, դաւառը, որուն ինքն ալ մէկ ազնիւ դաւակը, ցաւերուն գիտակից, վշտերուն սրտով հաղորդ, կ'ուզէր մեր սրտերն ալ կցել ու հաղորդակից ընել: Անոր ձայնը սրտցաւ ու հարազատ եղբօր մը ձայնն էր դաւառի և զիւզի Հայ աղջկան. ինչ խորհրդաւոր էր լսել այս առթիւ Ոսկան էֆ. ի այն պարզ ու անպատշաճ վերջիշումը, որով մեզ մտքով վաշրկեան մը կը յափշտակէր կը տանէր իր ուղեւորութեան ընթացքին այցելած Տարօնոյ գիւղերէն մէկը, ուր հայ վարժուէին գեանաւոր ու հաղիւ բնակիւի ստորերկրեայի մը մէջ ժողոված իր գեղջուկ աշակերտուհիները, կը սորվեցնէ անոնց Մեսրոպեան այն տառերն ու զպրութիւնը, որ ասկէ տասնեւհինգ դարեր առաջ Ս. Մեսրոպի աստուածաշունչ չրթներէն են խուեր նոյն վաղեմի գիւղերուն վանական չքեղ երդիքներուն տակ, ուր թերեւս Մեսրոպի մը հողին ու շունչն է որ դեռ կը սաւառնի ու կը յածի ի խնդիր իր ձեռակերտ հայ բարբառին, այսօր ալ անոր անեղծ պահպանումին, և ամբողջ հայութեան կ'ըսէ. Ես իմ գրերս միայն հայութեան մասն զաւակներուն համար չէր որ երկնեցի, քանի որ աղջիկ սեռն ալ իմ դաւակն է:

Լսե՛նք. գիւղացին էր որ հինգերորդ դարուն մէջ տուաւ Հայոց աղզին ձեռք գիրն ու զպրութիւնը՝ յանձին Տարօնոյ Հայիկ գիւղի շինական զաւակ Ս. Մեսրոպին. ու տեսնենք թէ հիմա քաղքենի Հայը, որուն մէջ բախտաւոր Իզմիրցին, պիտի երախտագէտի չնորհրցոյց տայ հատուցանելու իր պարտքը դէպի Մեսրոպի հայրենիքն եղող Տարօնը, որուն շուրջ, ինչպէս լաւ կերպով մեզ բացատրեց Ոսկան էֆէնտի, կը խտանայ ներկայիս ՀԱՅՈՒՆՍՏԱՆԻ մերձաւոր գործունէութիւնը:»

Գործ. Ժողովի պաշտօնավարութեան չրջանին՝ այս մասնաճիւղը եղաւ զօրաւոր աջակից մը, լեցուն խանգով և անձնակազմութեամբ, տարեկան գնահատելի գումար մը արամազրելով Ընկերութեան, ինչպէս կը տեսնուի մեր հաշիւներուն մէջ:

ԹԱԼԱՍԻ ՄԱՍՆԱՃԻԴ,

(Կազմուած 1911 Նոյեմբերին)

Այս մասնաճիւղը կազմուած ըլլալով Ընկերութեան հովանաւորութեան տակ զտնուող Վարդ-Պատրիկեան վարժարանի տեսչուհի



Օր. Եւգինէ Կիւրճեանի մասնաւոր ջանքերով, կարճատեւ գործունէութենէ մը վերջ, ցրուած է Օրիորդին տեղէն հեռացման պատճառաւ:

ԿԱՐՆՈՅ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Կազմուած 1908 ին)

Անդամներ

Տիկիներ	Մաքուհի Ուզունեան	(Ասեւապէս)
եւ	Ազնիւ Դարբինեան	(Ասեւադպիր)
Օրիորդներ	Տիրունի Աբուլեան	(Գանձապէս)
	Սիրանոյշ Էսայեան	
	Մարինէ Ղոյինեան	
	Եւպրասիէ Տէր Ազարեան	
	Սօֆի »	
	Սանդուխտ Տապաղեան	
	Լուսվարդ Բանչուսեան	
	Եպրասիէ Մովսեան	
	Աւստին Կարապետ	
	Աղաւնի Սառաֆեան	
	Զապէլ Ղեկեղիկեան	

Կարնոյ մեր մասնաճիւղը ոչ միայն նիւթական ընծայարարութիւններով սատարեց Ընկերութեան, այլ և հովանաւորելով տեղւոյն մէջ հաստատուած մեր վարժունիւնը և չրջակայ գիւղական վարժարանները, Զիթողի, Օճնիի և Թուանչքի մէջ:

ՄԱՐԱՇԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Կազմուած 1912 Յունվարին)

Անդամներ

Տիկիներ	Լ. Օրդանեան	(Ասեւապէս)
եւ	Է. Սաչալարեան	(Դէր Ասեւապէս)
Օրիորդներ	Ն. Տ. Յարութիւնեան	(Ասեւադպիր)
	Հ. Տ. Ազարեան	(Դէր Ասեւադպիր)
	Ս. Զօրպանեան	(Գանձապէս)
	Մ. Գազեմեզլեան	
	Մ. Տ. Մեսրոպեան	
	Վ. Վարժապետեան	

Այս նորակազմ մասնաճիւղը եւս, զոր յատուկ ջանքերով կազմեց Մարաշի ազգ. աղջկանց որբանոցի տեսչուհի Օր. Շիշմանեան, կը ջանայ օգտակար հանդիսանալ կեդրոնիս:

ՄՇՈՅ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Կազմուած 1913 Դեկտ.)

Մշոյ մեր մասնաճիւղը, զլիաւորութեամբ Տիկին Իսկուհի Քէնտէրեանի, կը կազմեն անդամները տեղական նախկին կանացի ընկերութեան մը, որ դադրեցնելով իր անցեալ գործունէութիւնը, կ'աշխատի յօգուտ Ընկերութեան:

ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Կազմուած 1911 Մարտ)

Անդամներ

Տիկիներ	Աննա Գարագաբեան	(Ասեւապէս)
եւ	Եւփիմե Սըվանեան	(Ասեւադպիր)
Օրիորդներ	Սարենիկ Քեհեանեան	(Գանձապէս)
	Իսկունի Ասեւեան	
	Յուլիանէ Աղջիկեան	
	Նեվիլի Քեհեանեան	
	Արսեմիս Ամասունի	

Այս մասնաճիւղին մասին, որ կազմուած է մասնաւորապէս տեղւոյն Թաղ. Խորհրդոյ կրթասէր ատենապետ Պարսամ Էֆ. Պետրոսեանի ջանքերով, մեր զգացած մասնաւոր գոհունակութիւնը այն է որ կրցած է Ընկերութեանս շուրջը բոլորել տեղւոյն 50-60 տունէ բաղկացած ամբողջ հայութիւնը, որ սիրով փարած է Ընկերութեանս նպատակին և որոշ բաժնեկիներով անդամ արձանագործուած:

ՊՈՒՔՐԷՇԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Կազմուած 1911 Դեկտ.)

Անդամներ

Տիկիներ	Սարենիկ Ազնաւորեան	(Ասեւապէս)
	Աղաւնի Դանիէլեան	(Ասեւադպիր)
	» Զամփիլուսի	(Գանձապէս)
	Սրբունի Շաֆարեան	
	» Փափազեան	
	Թագունի Գանթարեան	
	Զենոբիա Սուքիասեան	
	Վերգին Բակլանեան	
	Եսթեր Թափաբեան	

Այս մասնաճիւղը որ կազմուած է Ընկերութեանս Ընդհ. Ժողովով ատենապետ՝ Տիկին Սէզարին Տոքթ. Շահապաղի նախաձեռնու-

թեամբ, կոչուած է գնահատելի դեր մը կատարելու Ընկերութեանս նպատակի իրագործման մէջ, ինչպէս ցոյց կու տայ արդէն իր եռանդուն գործունէութիւնը:

ՄԱՔՐԻԳԻԻԼԻ ԿԻԼԻԿԵԱՆ ՈՐԲԱԽՆԱՄ
ԿԱՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1909 ՄԱՅԻՍ 5ին Մաքրիլիւղի մէջ Տիկին Բ. Բիտէճեանի նախաձեռնութեամբ հիմնուած Կիլիկիան Որբախնամ Կանանց Ընկերութիւնը իր գնահատելի աջակցութիւնը կ'ընծայէ միշտ Ընկերութեանս, տարեկան 70 ոսկեայ նուիրատուութեամբ: Այս գումարին 50 ուկ երկու վարժարաններ կը պահուին Կիլիկիոյ մէջ, Հասան Պէյլի և Խառնի, և մնացեալ 20 ոսկին ալ յատկացուած է Հաճնոյ Ս. Յակոբայ վանքին որբուհիներու դաստիարակութեան: Պոլսոյ մէջ կանացի միակ Ընկերութիւնն է որ մեր միջոցաւ կը նպաստէ դաւաորի Հայ աղջկանց դաստիարակութեան գործին:

ԳԱՀԻՐԵԻ ՀԱՅՈՒՄԵԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Թէեւ ՈԶ ԻԲՐ մասնաճիւղ, և սակայն Տիկնանց այս Միութիւնն ալ գլխաւորութեամբ Տիկին Բոլատի, յարատեւ գործունէութեամբ կեդրոնիս ուղարկեց իր պարբերական նպաստէն դատ, նաեւ վերջին տարուան մէջ սարքած նուագահանդէսէն կարեւոր բաժին մը:

ՄԵԼՔՈՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ ՖԱՊՐԻԲԱՅԻ
ՆՊԱՍՏԻՑ ՍՆՏՈՒԿԸ

ՇՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵԱՄԲ կը յիշատակենք նաեւ Աղեքսանդրիոյ Մելքոնեան Եղբարց Ֆապրիքայի տարեկան նպատու 50 ոսկի, որով կը հոգացուին Պաղչէի և Էօզէլլիի մեր վարժարաններուն ծախքերը: Մելքոնեան Եղբարց, ինչպէս նաեւ Մաքրիլիւղի Կիլ. Որբախնամ Տիկնանց նպաստով ասկէ առաջ կը հոգացուէին Ատանայի մեր վարժարանին ծախքերը. բայց երբ այլեւս Ատանան պէտք չունեցաւ Ընկերութեանս աջակցութեան, վերոյիշեալ նպատաներով Ատանայի վարժարանին տեղ Ընկերութիւնս հաստատեց չորս գիւղական վարժարաններ, Պաղչէ, Խառնի, Հասան Պէյլի և Էօզէլլի:

ԳԱՀԻՐԵԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾ. ԺՈՂՈՎԱԼ իր պաշտօնավարութեան շրջանին Կարնոյ իր վարժուհիներին անունով մասնաւոր զիմում կատարելով Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնին, որ նախօրոք շրջանին 50 անգլիական ոսկի զրկած էր, պատիւ ըրաւ 70 անգլ. ոսկեայ բարձրացնելու զայն: Միւս կողմէ, քանի մը ամիս վերջը, նոյն ազգօգուտ Միութիւնը

առաջարկեց Ընկերութեանս տարեկան 100 ոսկեայ գումար մը տրամադրել, բրդախօս վայրերու մէջ իր անունով և իր հաշուին գիւղական աղջկանց չորս վարժարաններ պահելու համար, որոնց մասին պիտի խօսուի Ընկերութեանս յաջորդ տեղեկագրով:

ԳԸՆԱԼԸԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՍ այս շրջանին 30 ոսկիի բացառիկ հասոյթ մըն ալ ունեցաւ Գրնալը կղզիի մէջ սարքուած նուագահանդէսէ մը, որուն նախաձեռնարկ հանդիսացած էր Ընկերութեանս Ընդհ. Ժողովի ատու նապեա Օր. Ատրինէ Տօնէլեան և որուն իրենց չորհալի մասնակցութեամբ և օժանդակութեամբ նպաստեցին. Տիկին Զ. Ասատուր, Օրք. Արաքսի և Պերճուհի Թաշճեան, Ֆ. և Տ. Ծիլմէճեան, Ա. Սէրվիկեան, Ծ. Պօչնակեան, և Պ. Պ. Օ. և Վ. Պօչնակեան, Կիւլեանօֆ, Մազաստար, Խ. Սաաթեան, Օ. Տէրունեան, Օ. Թաշճեան և տալանաւոր Բէշիշեան եղբարք:

ՍԽԱԿ ԷՖ. ԱՇՃԵԱՆԻ ԿԱՐԵՈՐ ՆՊԱՍՏԸ

ՀԱՍՈՅԹԵՆԵՐՈՒ այս շարքին մէջ մասնաւոր հաճոյքով մը կը հաղորդենք թէ Ընկերութեանս համակիր և խորհրդ. անդամ ողբացեալ Սիսակ էֆ. Աշճեանի նուիրած 35 հատոր Լուսինեան լատարաններու ցարդ վաճառուած միայն մէկ մասին արդիւնքով Ընկերութիւնս գնած է Բոչէի Ֆօնտէի արժէթուղթ մը 293906 թիւ:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհրդ. անդամներէն Ոսկան էֆ. ի զիմումին վրայ, Պաղտատի մէջ հանգանակութիւն մը կատարուեցաւ Գրիգոր էֆ. Իսկէնտէրեանի ջանքերով, ինչպէս նաեւ Կեսարիոյ շրջակայքը, այս վերջինը պատուելի Մոսալեան նազարէթ էֆ. ձեռամբ, որ անձնուէր համակրանք մը կը տածէ Ընկերութեանս հանդէս և իր այցելած բոլոր վայրերուն մէջ բացատրելով Ազգանուէրի նպատակը, կը հրաւիրէ ժողովուրդը իր օգնութեան բաժինը ընծայելու անոր:

Պրուսայի մէջ Տիկ. Վ. Նշաստաճեան այս շրջանին եւս ազնուաբար շարունակեց իր տարեկան հանգանակութիւնը, ինչպէս Ռուսոնքի մէջ հանգանակութեան ձեռնարկեց Տիկ. Խորիկ Ասլանեան, և Խարթումի մէջ ալ Տիար Գ. Ծիլմէճեան: Այս հանգանակութեանց ցանկերը կը տեսնուին տեղեկագրիս մէջ:

Շնորհակալութեամբ կը յիշատակենք նաեւ Բանկալլիի Անարատ Յղութեան Դերց վարժարանին սանուհեաց օժանդակութիւնը, թեյալութեամբ և միջոցաւ հաստատութեան կրթանուէր տեսչուհի Բոյր Կապրաշեանի:

Չենք կրնար մոռնալ նաեւ Մանչեսթըրի Տիկնանց Միութեան 10 անդ. ոսկիի նուէրը, որով իրենց համակրութիւնը յայտնեցին Ընկերութեանս:

ՊԱՐԱԶԱՆԴԵՍ

ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՍ իր պաշտօնավարութեան երկամեայ չրջանին յաջողեցաւ Ընկերութեանս աւանդական տարեկան պարահանդէսները արդիւնաւորել, հակառակ տիրող տնտեսական սեղմ տագնապին, և հակառակ եղանակին ամէնէն վերջը մնացած ըլլալուն, ինչ որ ապացոյց մըն է թէ Ընկերութեանս նպատակը արժանաւորապէս կը գնահատուի ամենուրեք, որքան ազգային՝ նոյնքան ալ օտար բարձր չրջանակներու մէջ:

Առաջին չրջանի պարահանդէսը որ տեղի ունեցաւ 1911 Մարտ 17/30 Եջ. գիշերը, հովանաւորութեամբ Կայս. Իշխան Ապտիւլ Մէճիտ էֆ.ի, Թոքատլեանի սրահներուն մէջ, զուտ հասոյթ արտադրեց 123160 զրշ. ինչ որ տարակոյս չկայ թէ կը պարտինք անձնուէր և եռանդուն աշխատութեանց պարահանդէսի Կարգադիր Մասնախումբին, որ Մեծ-Եպարքոս Հագզը փաշայի նախագահութեան և ծերակուտական Զ. Տիլպէր էֆ.ի դեր նախագահութեան տակ կը բաղկանար հետեւեալներէ. —

Տիկնայք՝ Մ. Անդրեասեան, Հ. Ասասուր, Մ. Ազարեան, Մ. Գալիմֆեարեան, Յ. Գամպեր, Օր. Ս. Թաւեան, Տ. Կիւմիւրեկեան, Ա. Հարեց, Տֆր. Մախոյսեան, Տ. Մարտիկեան, Օր. Միւհենիսեան, Մ. Յակոբեան, Ե. Նիւսաբանեան, Տֆր. Շահպազ, Գ. Շամսանեան Խան, Տֆր. Պալրազար, Հ. Սամալոյլուեան, Տալուս Էֆ., Ս. Տեր Ազարեան, Զ. Տիլպէր, Ռ. Տէլպիօֆ, Տ. Քիլիկեան:

Տեարք՝ Մ. Ազարեան Էֆ. (Ծերակուտական), Տֆր. Անեմեան պէյ, Հ. Ասասուր Էֆ., Արիսդիսի Փաւա (Ծերակուտական), Տֆր. Բաբա, Զ. Բեքմեզ, Լ. Բիսար, Սօլթի Գազանովա, Կ. Գալիլեան, Յ. Գամպեր, Մաժուր Գաւրօյի պէյ, Յ. Գուլումեան պէյ, Գօզմիսի Էֆ. (Երեսփոխան), Ե. Եուսուֆեան Էֆ., Օ. Է. Երամ Էֆ. (Ծերակուտական), Ս. Զեքի պէյ, Գ. Զօհրապ Էֆ. (Երեսփոխան), Թալեաք պէյ (Երեսփոխան), Գ. Թորգոմեան Էֆ., Լուքի պէյ (Ն. Կ. Վ. Սենեկյապէս), Խալիլ պէյ (Նախարար), Տֆր. Խայրի պէյ (Ն. Կ. Վ. Բժշկապէս), Տ. Կիւմիւրեկեան, Ի. Կերսօն, Ա. Կորկոյի, Իւսան Ս. Հալիմ Փաւա (Ծերակուտական), Է. Հիւկեն, Հիւսէին ձանիս պէյ (Երեսփոխան), Մ. Ղազարոսեան, Մ. ձալիս պէյ (Նախարար), Տֆր. Մալխասեան, Տֆր. Մախոյսեան, Մուհիսսին պէյ (Բերայի կառավարիչ), Մ. Յակոբեան, Գ. Նորասունկեան Էֆ. (Ծերակուտական), Զ. Շամսանեան Խան, Ա. Շմաւոնեան,

Յ. Պապեան, Է. Պօսուի, Ա. Ռէյ, Բ. Ռեվուալ, Ն. Ռուսօ Էֆ., Վ. Յ. Սամուէլօֆ, Է. Սալիմ, Տֆր. Սամուէլ Խան, Սասուն Էֆ. (Երեսփոխան), Արամ Սեյիեան, Սրբ. Պապինկըրը Սմիթ, Յ. Սրամալոյեան Էֆ., Սուպի պէյ (Քաղաքապէս), Պառոն Տր Վանսկօվ, Վարդգէս Էֆ. (Երեսփոխան), Ս. Տալուս պէյ, Գ. Տեմիրնիպաւեան Էֆ., Լ. Տեմիրնիպաւեան Էֆ., Տ. Տեր-Մուսեան Էֆ., Հրաչեայ Տեր-Ներսէսեան, Բ. Տօրք Էֆ. (Երեսփոխան), Տ. Քիլիկեան Էֆ., Տ. Օրքի, Մարեալ Ֆուս Փաւա (Ծերակուտական):

Երկրորդ տարւոյ պարահանդէսը որ 1912 մարտ 14ի գիշերը Բերա Բալասի սրահներուն մէջ տեղի ունեցաւ զարծեալ Կայս. Իշխան Բարձր. Ապտիւլ Մէճիտ էֆ.ի հովանաւորութեան տակ, և տնտեսական աւելի անապատս պայմաններու մէջ, զուտ հասոյթ ունեցաւ 79,963 զրշ., նմանապէս արդիւնք ջանադիր աշխատութեանց Կարգադիր Մասնախումբին, որ ծերակուտական Հիւսէյին Հիլմի Փաշայի նախագահութեամբ կը բաղկանար հետեւեալներէն. —

Տիկնայք՝ Տֆր. Անեմեան պէյ, Մ. Յակոբեան, Ա. Ասոււաժասուր, Մ. Ազարեան, Տֆր. Պալրազար, Մ. Գալիմֆեարեան, Տֆր. Շահպազ, Հ. Գուլումեան պէյ, Զ. Տիլպէր, Փ. Տօրք, Ա. Հարեց, Տ. Քիլիկեան, Պ. Խօրասանցի, Տֆր. Մախոյսեան, Ա. Միլ, Օր. Մ. Միւհենիսեան, Գ. Շամսանեան Խան, Յ. Վարդգէս, Տֆր. Զարֆեան:

Տեարք՝ Մ. Յակոբեան, Ա. Արսենեան, Մ. Ազարեան Էֆ. (Ծերակուտական), Յ. Պապեան, Տֆր. Պալրազար, Է. Պօսուի, Ս. Գազանովա, Մ. Շահպազ, Մ. Շիրինեան, Յ. Գուլումեան պէյ, Ս. Տալուս պէյ, Գ. Տեմիրնիպաւեան, Լ. Տեմիրնիպաւեան (Գանձապէս), Զ. Տիլպէր Էֆ. (Ծերակուտական), Հ. ձանիս պէյ, ձալիս պէյ (Նախարար), Գ. Ֆերաս, Պր. Ֆուս, Ժ. Կերսօն, Ա. Կորկոյի, Կրոս, Տ. Կիւմիւրեկեան, Իւսան Սալիս Հալիմ Փաւա, Հ. Ֆերուսան, Մ. Ղազարոսեան, Իսմէր պէյ, Է. Հիւկեն, Ե. Գարակեօղեան, Պ. Խօրասանցի, Տ. Քիլիկեան, Ռ. Մարտիկ, Ա. Միլ, Մուհիսսին պէյ, Մ. Նորասունկեան, Ն. Նորասունկեան, Զ. Բեքմեզեան, Բ. Բրվուալ, Ա. Բէյ, Տֆր. Սերքիւան (Քարսունեան), Սրբ. Պապինկըրը Սմիթ, Վ. Սուրենեան, Թալեաք պէյ (Նախարար), Պառոն Տր Վանսկօվ, Ե. Եուսուֆեան, Սալիմ Զեքի պէյ, Գ. Զօհրապ, Տֆր. Զարֆեան:

Տեղական ազգ. և օտար Մամուլը, ինչպէս ամէն պատահութեան, այս առթիւ ևս ի վեր հանելով Ընկերութեանս նպատակին բարձրութիւնը, և պարահանդէսին ընտանեկան հանգամանքը, գնահատութեան տողեր նուիրեց, որուն առթիւ քաղցր պարտականութիւն մը կը համարինք խորին շնորհակալութիւն յայտնել հոս:



ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՈՒՒՐԱՏՈՒՆԵՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ կը յիշատակենք նաեւ հետեւեալ նուիրատուութիւնները. —

Տեարք Երամեան Եղբարք 20 Կարտա գողնուցու, Զէյթունի վարժարանին համար:

Սմբատ էֆ. Դաւթեան՝ Բիլիսի վարժարանին ամբողջ ուսանողութեան համար իր դասագիրքերէն:

Յակոբ էֆ. Գորեան՝ Երկու ծրար խաւաքարտ, զրաւանակի կազմաւորութեան առթիւ:

Արամ էֆ. Սամանեան մոմազօծ կտաւ և վարագոյրցու, նոյն առթիւ:

Մերուժան էֆ. Պարսամեան 15 օրինակ «Մեր Տարեցոյցը»:

«Արազած», «Բժիշկ» և «Բողոք» պարբերութիւններու խմբագրութիւնները հաճեցան իրենց թերթերէն նուիրել Ընկերութեանս վարժարաններուն:

ԱՂԵՐՍԱՆԴՐՈՅ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

ԽԱՃԱՆՈՐԴՆԵՐԸ ԵՒ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐԸ

1910-12 ԵՐԶԱՆՆԵՐՈՒ

Տ. Տ.

Ամսական եգիպտական զր. 50. Գալֆայեան խան Զարուհի, Թարաքճեան խաթուն, Սարգիսեան Սիմոն — 25 զր. Իզմիրեան Սարգիս, ձեւահիւրճեան Ակիւլինէ — 20 զր. Արազամեան Վասիլիկ, Թարաքճեան Դազարոս, Մկրտիչեան Լեւոն, Մուղալեան Յարութիւն, Մարանկոյ Հայկանոյ, Յակոբեան Աննա, Շերիտճեան պէյ Լիլիս, Օտապալեան Արմենակ — 15 զր. Քերմիզեան Արաքս — 10 զր. Արշակեան Արամ պէյ, Ազնաւորեան Վարդուհի, Աղաւնուհի Տ. Մկրտիչ Եպիսկոպոս, Անլիւրեան Կարապետ, Այնաճեան Մաքսուտ, Ազատեան Հրանտ, Դասպարեան Վիկտորիա, Դայսէրլեան Աղաւնի, Դարամանեան Եղբարք, Դաւթեան Սեդրակ, Ենովքեան Աննա, Լաթիւնլեան Վիկտորիա, Թէլեան Թորոս, Թովմայեան Վարդենի, Իբէքեան Մարիանէ, Խարտաշ Արամ պէյ, Կիւրճեան Ալիս, Հէքիմեան Լուսիս, Հալաճեան Յուլիանէ, Միլանօֆ Զարուհի, Մերամէթճեան Արմինէ, Մէթթէմեան Իսկուհի, Միթթարեան Ռեբեկա, Մէլէճեան Տիգրանուհի, Ժամկոչեան Տօքթ. Միսաք, Մարգարեան Արուսեակ, Միթթարեան Տիգրան, Մութաֆեանց Նունէ, Մամէլեան Համասփիւռ, Նիզամեան Հայկանոյ, Նիզամեան Հրանդին, Չպուքճեան Հերիքա, Պատուրեան Իսկուհի, Սուճեան Ռօզ, Սպէնլեան Լուսիս, Օհանեան Զենոպի — 5 զր. Լիլիճեան Մարի, Թարաքճեան Մալվինա, Թուրլու Մարքո, Թրեանց Աննա, Իշլէմէճեան Սօֆի, Հէքիմեան Կարապետ, Մանուկեան Պարոյր, Մարգարեան Գրիգոր, Մեքիքճեան Աւետիս, Մկրտիչեան Կարապետ, ձեպէճեան Զաճի Նշան, Շնորհեան Աննա և Անահիտ, Չպուքճեան Հրանտ, Չարագ Միհրան, Պըրքառեան Լիլիկ, Սէմիդեան Մալվինա, Սափրիչեան Ֆիլօ, Վայնաշարեան Պրիճիկ, Տէօքմէճեան Մարիամ, Տէր Յովհաննէսեան Հայկազն, Փափազեան Յուլիանէ, Փափազեան Համբարձում, Փափազեան Վերժինի — 2 զր. Խազուլեան Դարեգին:

ՏԱՐԵԱՆ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐ

300 զր. Մէթթէմեան Արմենակ և Գէորգ — 240 զր. Անտոնեան Սիմոն — 200 զր. Մութաֆեանց Յովհաննէս, Մուրատեան Եղուարդ — 195 զր. Մէթթէմեան Մուրատ — 100 զր. Թիւթիւնճեան Տիլմաք, Սէմէրճեան Գրիգոր — 97.50 զր. Թիւթիւնճեան Աղաւնի, Պաքճեան Յակոբ — 50 զր. Փափազեան Օլիա, Փափազեան Զարուհի, Քըլքճեան Տօքթ. Նիկողոս:

ՄԻԱՆՈՒԱԳ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐ

150 զր. Քիւրքճեան Եղբարք — 100 զր. Քիւրքճեան Նարգիսի, Աղանեան Յովսէփ, Աղանեան Յակոբ, Հաճընեան Տիգրան, Տէրունեան Փայլակ — 75 զր. Քիւրքճեան Հայկանոյ — 97.50 զր. Խորասանճեան Վահան — 50 զր. Քէչեան Եղբարք, Արգարեան Եղբարք, Գըմգըմեան Եղբարք, Գօլանճեան Սաթէնիկ, Եկաւեան Կարապետ, Խաչատուրեան Լուսաւոր, Ճիւրճեան Պարկեշտ, Ճիւրճեան Գէորգ, Վալեան Երաճան, Սօլաքեան Կիրակոս, Փափազեան, Շահինեան և Ընկ. — 48.50 զր. Մուալլիմ Մուստաֆա Բաշտ — 40 զր. Փափազեան Կարապետ, Խաչիկեան Յակոբ — 30. Օհանեան Կարապետ, Գրիգորեան Գրիգոր, Մովսէսեան Սերոբ — 25. Քիւրքճեան Յամիկ, Տէրունեան Փիլիպոս, Դազարեան Յակոբ — 20. Օհանեան Կ., Գօլանճեան Պետրոս, Զուլալեան Յակոբ, Թումայեան Օննիկ, Թօգաթիւն Կարապետ, Ճօրճ Սեդրակ, Մալուճեան Վահրամ — 15. Քիւրքճեան Արշալոյս, Խաչիկեան Մեսրոպ — 10. Իսկէնտէրեան Մարիամ — Վիճակահանութեան մը հասոյթէն 6325:

ՊՈՒՐԵԼՇԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐԸ

Տ. Տ.

Տարեկան 40 Քրանք. Ազնաւորեան Սաթէնիկ — 20. Սուքիսեան Զենուրիս, Շաքարճեան Սրբուհի, Թիւլլիւնճեան Լիլիկ, Զամֆիսիսքա Աղաւնի, Թաքթաքեան Լաթիւր, Կոնիկեան Երանուհի, Պարաքեան Մարի, Դաւանեան Բրաւրիոն, Առաքելեան Մանիկ, Բաքլաճեան Վերգինէ, Դանթարճեան Թագուհի, Բելլէնիկեան Օլիտա, Դարամանեան Նազիկ, Դանիլեան Աղաւնի, Մարտիրոսեան Նազիկ, Քէչիլեան Եղբարք, Շաքարճեան Եղիսարեթ, Փափազեան Սրբուհի, Զատիկեան Տրդատ, Դովաֆ Արմենուհի, Մելիք Մալվինէ, Ալիքսանեան Աննա, Կարապետեան և Ազարեան — 15 Քրանք. Խեռեան Զինգա — 10 Քրանք. Բարսեղեան Միսաք, Սարգիսեան Պայծառ, Կարապետեան Արաքսի, Սարգիսեան Սիրաւոյ, Մովսէսեան Տիգրանուհի, Իշխանեան Տիգրանուհի, Տօքուդեան Մաքրուհի, Լիլմսեան Նազիկ, Մարգարեան Յակոբ, Գէորգեան Մկրտիչ, Մարգարեան Վարդանոյ, Կարապետեան Ռօզա, Տէր Մարկոսեան Գրիգոր, Մարկոսեան Ոսկի, Պապիկեան Նշան, Յարութիւնեան Խաչիկ, Սարգիսեան Բրիտանիէ, Թորոսեան Եսթեր, Դովանեան Տիգրանուհի, Կիրակոսեան Մարիամ, Անտոնեան Բերսիկ, Յովհաննէսեան Միհրդատ, Պօղեան Տօքթ. Լազար, Յակոբեան Կատարինէ, Թումսեան Հոփսիմէ, Յարուհի Նիկիլի — 5 Քրանք. Նարկիլեան Հայկանոյ, Խաչիկեան Դոնարիկ, Վարդեան Թիւնեան Եղիսարեթ, Միլիճեանեան Հայկանոյ, Խաչիկեան Դոնարիկ, Վարդեան Նուարդ, Կարապետեան Դոնարիկ, Բաքլաճեան Յարութիւն, Պօղեան Կիլիկէ, Դազանճեան Վերգին, Եզնայեան Վերգին, Պարտիզանեան Հայկանոյ, Սարգիսեան Տիգրանուհի, Իսկէնտէրեան Մարիամ, Վարդերեսեան Կարապետ, Մովսէսեան Պօղոս, Մինասեան Մաքրուհի, Աշքեան Արաքսի, Պայճեան Աղաւնի, Տէր Մարկոսեան Սերովքէ, Մանուկեան Նեկաար, Բելլէնիկեան Արամ, Փափազեան Մարիամ, Շաքար-

ճեան Լեւոն, Գեորգեան Ներսէս, Թորոսեան Թորոս, Մանուկեան Գրիգոր, Բէլէնկեան Գրիգոր, Ֆերասեան Տիրուհի, Շահինեան Վերթին, Կոնիկեան Արբաշաճ, Իսկէնտէրեան Կիւրիկ, Մարգարեան Տիրուհի, Գրիգորեան Վարդուհի, Գալմաքլեան Մարիամ, Թազուրեան Բարսիոն, Գրիգորեան Զապէլ, Գեորգեան Թրֆանտա, Գեորգեան Կարապետ, Սիմոնեան Ասատուր, Դասպարեան Բերուդիկ — 3 Ֆրանք. Ասատուրեան Գեորգ, Աւագեան Յարութիւն, Յարութիւնեան Յակոբ:

ԿՐԻՋԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

Տ. Տ.

Ամսական 5 զրշ. Մարիցա Գուշճեան, Գալիանէ Թահմիզճեան: — 3 զրշ. Բերուդ Սիւրմէնեան, Հայկուհի Միքայէլեան, Արաքսի Գուշճեան, Մարիցա Զայճեան, Աղաւնի Պարթեւ: — 2 զրշ. Աղնիւ Ս. Բրուտեան, Աղնիւ Ք. Բրուտեան, Վարդէնի Ուլուրէկեան, Ուրեկա Ամպրեան, Արուսեակ Լեփեան, Աղաւնի Մոմճեան, Բարսիոն Մոմճեան, Մալիամ Սարաֆեան, Հայկուհի Դանիէլեան, Զարուհի Խաչիկեան, Գալիանէ Շահապեան, Արուհի Միջիկեան, Զուարթ Թաշճեան, Բարսիոն Բաշալեան, Փառանձեմ Մալիսեան, Արմենուհի Զիթճեան, Արուհի Գուշտաքեան, Փելլընէ Մէլլընեան, Աննա Գուշճեան, Սարմէնիկ Տէր Անդրէասեան, Հռիփսիմէ Տ. Վարդանեան, Սարմէնիկ Նիսանեան, Գեւորդ Նարմեան: — 1 զրշ. Սիրուն Արապեան, Սարմէնիկ Սարաֆեան, Սիրան Թահմիզճեան, Գոհարիկ Գեօմիւրճեան, Սիրան Գարակէօղեան, Տատրակ Սիւրմէնեան, Ովսանա Սիւրմէնեան, Ուրեկա Տ. Նիզիկեան, Մարիամ ձիզմէճեան, Երանուհի Պոյաճեան, Հայկանոյ Անանեան, Զարուհի Նադուկեան, Աստղիկ Բոմոմեան, Սիրվարդ Հապիկեան, Պատրիկ Աստուրեան, Գարեգին Մարտիկեան, Գուրգէն Գէլլէրեան, Յարութիւն Յարութիւնեան, Սարմէնիկ Նարմեան, Հայկանոյ Զեօկիւրեան, Արուսեակ Ալթունեան, Կուսինէ Արապեան, Կարգուհի Տ. Մէլլընեան, Պայծառ Լճիկեան, Սարմէնիկ Գրիգորեան, Մերսեա Չաքարեան, Հռիփսիմէ Զուրիկեան, Մարիամ Բիշիկեան, Հայկանոյ Գալանճեան, Փառանձեմ Բալանճեան, Սիրանոյ Թորոսեան, Զարուհի Թորոսեան, Սանդուխտ Թորոսեան, Անոյ Թորոսեան, Անիկ Գէլլէրեան, Սարմէնիկ Կ. Զալմալաշեան, Սարմէնիկ Ա. Զալմալաշեան, Սարմէնիկ Գուշճեան, Սահուհի խուշկերեան, Զարուհի Միջիկեան, Սիրուն Գարակէօղեան, Պերճուհի Մարկոսեան, Սիրանոյ Գէլլէրեան, Մանէ Թահմիզճեան, Գեղեցիկ ձիկերեան, Իւզարեթ ձիկերեան, Վարդէնի Առիկեան, Աննա Տ. Պալապեան, Թիւրվէնտէ Այրճեան, Փառանձեմ Երեցեան, Իմաստուհի ձերմակեան, Լիմաս Փափաղեան, Ովսանա Ալթունեան, Նուարդ Պէնիկեան, Պայծառ Երախայեան, Սարմէնիկ Մատթէոսեան, Աննա Թաշճեան, Սոֆիա Մկրտիչեան, Ովսանա Զեօկիւրեան, Գեղեցիկ Զեօկիւրեան, Խոսրովուհի Աստուրեան, Փերրոնէ Գալէնտերեան, Ռամէլա Գալէնտերեան, Արփենիկ Աստուրեան, Զուարթ Դանիէլեան, Փարիս Սարաճեան, Սարմէնիկ Աղնաուրեան:

ԿԱՐՆՈՑ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

Տ. Տ.

Տարեկան 51.50 զրշ. Թերզեան Տիրուհի: — 48 զրշ. Բանդատեան Լուսիարդ, Գալմաքլեան Երանուհի, Լեփեան Նոյեմզար, Հայկեան Մաքրուհի, Ուզունեան Մաքրուհի, Բամպուքեան Երանուհի, Բասարմաճեան Սարմէնիկ, Սապոնճեան Լիմաս: — 40 զրշ. Երկանեան Ասանէթ (*): — 36 զրշ. Լեփեան Աղնիւ, Պեղապեան

(*) Նախապէս 48 դր. վնարմ է:

Նուարդ: — 24 զրշ. Արուհեան Տիրուհի, Այրերեան Զարուհի, Ալթունեան Զարուհի, Ալչուգեան Վարդուհի, Աղապալեան Զապէլ, Ամրիկեան Փառանձեմ, Արապեան Հռիփսիմէ, Աւետիսեան Փերրոնէ, Բանդատեան Աղնիւ, Գալուստեան Բալանտ, Գալմաքլեան Լուսիա, Գարակիւլեան Արմենուհի, Գուշճեան Վարդուհի, Գարրիկեան Աղնիւ, Գատարեան Եւպրաքսէ, Գերձակեան Շուշանիկ, Երկանեան Նարդուհի, Երկանեան Լուկիւտ, Երկանեան Բերսարէ, Եկաւեան Հայկանոյ, Եսայեան Միրանոյ, Զարմանեան Նարին, Ժախեան Իւզարեթ, Իջգալայեան Նաթիւր, Իջգալայեան Զարուհի (1), Իփէքճեան Աստղիկ, Իսկապալեան Ալթուս, Խաչատուրեան Սարգիս, Խեղեկեան Հաճիկիւլ, Հայկեան Նադիկ, Մերիկեան Սոֆիա, Մերիկեան Սարմէնիկ, Մարեան Հայկանոյ, Մարեան Սարմէնիկ, Միրիճանեան Դիլուհի, Յակոբեան Արամ, Յակոբեան Աղապի, Նարեկեան Մարգարիտ, Շահինեան Վարդուհի, Սապոնճեան Պիւլիւիւլ, Տապաղեան Փալլաճու, Հանէսեան Նազուլ, Հանէսեան Աղապի, Դաղիկեան Սրմա, Դաղարոսեան Նազիկիկ, ձիլէքճեան Պիւլիւիւլ, Միրիճանեան Դիլուհի (2), Միտեան Նազիկիկ (3), Նաճարեան Ալիսէ, Պալաւսանեան Զարմուհի, Պաղտայեան Տիրուհի, Սարաֆեան Հռիփսիմէ, Պոյաճեան Սարմէնիկ, Սերվրեան Մաքրուհի, Վասիկեան Փերրոնէ, Տէր-Աղաբեան Եւպրաքսէ, Տէր-Աղաբեան Սոֆիա, Տէր-Աղաբեան Նուհիա, Տէր-Ռափայկեան Ժողէֆին, Տէր-Մէլլիսեղեան Սիրանոյ, Տապաղեան Սանդուխտ, Տիգրանեան Եւպրաքսէ, Տիգրանեան Աղնիւ, Տիգրանեան Շուշանիկ, Տիգրանեան Նուարդ, Բամպուքեան Աղապի, Բամպուքեան Եղիսարեթ, Բասարմաճեան Աղնիւ, Օհանեան Լուսիա (4), Բասարմաճեան Իսկուհի: — 19 զրշ. Շահանեան Փերրոնէ (5), ձիլանեան Թերզէ: — 12 զրշ. Աղամեան Սիրանոյ, Արուսեակեան Արմենուհի, Աղապալեան Արմենուհի, Աճէմեան Փառանձեմ, Այճեան Թաղուհի, Այճեան Նազիկիկ, Աղաճեան Անթիքա, Աղաճեան Վերդիկէ, Արծնեան Արուհի, Բարանեան Ֆիլորիցա, Բանդատեան Մարթա, Բարիքեան Աղաւնի, Բրուտեան Մաղթաղիկէ, Բրուտեան Շուշանիկ, Գարրիկեան Սոֆիա, Գալմաքլեան Նարդուհի, Գալմանճեան Զարուհի, Գալմաքլեան Արաքսի, Գառնիկեան Սոդոմէ, Գարազաշեան Արտեմիս, Գարակէօղեան Աղաւնի, Գարակէօղեան Փերրոնէ, Դաւոյեան Նուարդ, Գեորգեան Սրմա, Գուշճեան Աղնիւ, Գարրիկեան Մարիամ, Գատարեան Աղաւնի, Դաւիթօֆ Իսկուհի, Դրմեան Հերմիէ, Երկանեան Շոգակաթ, Եանըգեան Աղնիւ, Եանըգեան Մարիցա, Երմեան Սարմէնիկ, Զաքարեան Ալիսարեան, Եանըգեան Աղնիւ, Զատիկեան Կատարիկէ, Լիլիպալեան Լուսիա, Լիլիպալեան Վերդիկէ, Լիլիպալեան Նուհիա, Լիլիպալեան Արմենուհի, Լիլիպալեան Բերսարէ, Լիլիպալեան Եւպրաքսէ, Թալմարեան Ֆրոսո, Թալմարեան Վարսիկիկ, Թոգաճեան Մարիցա, Թոգաճեան Սոֆիա, Թոգլեան Լիմաս, Թիւթիւնեան Վարդանոյ, Թիւթիւնեան Աղնիւ, Թուսայեան Արուսեակ, Թոփեան Հրանոյ, Թոփայեան Շոգակաթ, Ժախեան Վարսիկիկ, Ինճէպապալեան Հռիփսիմէ, Ինճիճեան Թերզէ, Ինճիճեան Լիլիկ, Իփէքճեան Արուհի, Լաճիկեան Սարմէնիկ, Լեփեան Մանիկ, Լոյսապոնեան Մարգարիտ, Լոյսապոնեան Զարուհի, Խանամիկեան Մարիամ, Խաչատուրեան Հրանոյ, Խիւտալեան Թաղուհի, Խիւտալեան Զապէլ, Խիւտալեան Լիլիկ, Խոսրովեան Աղապի, Կաղիկեան Հռիփսիմէ, Կարիկեան Պեղիքիա, Դէնէվիկեան Զապէլ, Դէնէվիկեան

(1) Նախապէս 48 դր. վնարմ է:
(2) » 48 » »
(3) » 36 » »
(4) » 12 » »
(5) » 27 » »

Իսկուհի, Ղոյինեան Մարիանէ, Ղուկասեան Աննա, Ղուկասեան Էլմաս, ձիւնեան Մարիցա, ձիւնեան Ագապի, Մաղմանեան Մարիամ, Մակարեան Եղիսարեթ, Մանուկեան Սարգիս, Մանուկեան Մարիամ, Մարութեան Սօֆի, Մարութեան Նուարդ, Մարութեան Արմենակ, Մանկասարեան Աշխէն, Մարկոսեան Արշալոյս, Միլքիսեղեկեան Աննիկ, Միրոյեան Արուսեակ, Միսաքեան Մարիցա, Միքայէլեան Եւնիկէ, Մնացականեան Մարինէ, Մնացականեան Աղաւնի, Մովսէսեան Եւպրատ, Մովսէսեան Աղաւնի, Յակոբեան Թէոփիստէ, Նալպանտեան Բերսարէ, Նալպանտեան Զերեթ, Նախշէրեան Հռիփսիմէ, Նորատունկեան Եսթեր, Շահինեան Վերգինէ, Շահնազարեան Շուշանիկ, Շահոյեան Եղիսարեթ, Շիւշէքեան Մարիամ, Չափեան Սրբուհի, Չուխաճեան Հայկանոյշ, Պալասանեան Թագուհի, Պալասանեան Բերսարէ, Պալասանեան Վիքթորիա, Պալմաճեան Սաթենիկ, Պամաճեան Աստղիկ, Պապաեան Նեկտար, Պապիկեան Համասփիւռ⁽¹⁾, Պարտիզպանեան Սաթենիկ, Պետրոսեան Հայկանոյշ, Պերպէրեան Հաճի-Տուտու, Պոլուգլեան Վերոնիկ, Սահակեան Հռիփսիմէ, Սարգիսեան Եղիսարեթ, Սարոյեան Ազնիւ, Սերէնիկիւեան Թագուհի, Սերէնիկիւեան Հաճիգիւլ, Սիրունեան փալօ, Սողիկեան Սաթենիկ, Սուլիսան Սերանոյշ, Վասիլեան Պերճուհի, Վէհրեան Արաքսի, Վրայեան Սիմոն, Տալեան Զարուհի, Տապաղեան Հայկանոյշ, Տէր-Աղարեան Զապէլ, Տէր-Աղարեան Երմոնէ, Տէր-Աստուրեան Ագապի⁽²⁾, Տէր-Սարգսեան Վերգինէ, Սարգսեան Տէն. Շողակաթ, Սարգսեան Օր. Շողակաթ, Ռաֆայէլեան Արտեմիս, Ռաֆայէլեան Արմենուհի, Տէր-Ղուկասեան Վարսենիկ, Տիւղեան Արուսեակ, Տիւղեան Արմենուհի, Ռնկոյեան Զապէլ, Ռուրիւեան Ագապի, Բամպուքեան Զարուհի, Բասարմաճեան Աննա, Փաքլորեան Մարթա, Քէպէլեան Ազնիւ, Քէօսէեան Մարիամ⁽³⁾, Քէօսէեան Ագապի⁽⁴⁾, Օտապաշեան Ազնիւ, Քիրիշճեան Եւպրատ, Օտապաշեան Հայկանոյշ, Ֆերհատեան Նազնիկ, Փիլաւեան Արեգնազ: — 5 1/2 զրշ. Դէնէվիւզեան Գրիգոր:

ՄԻՍՏՆՈՒԱԳ ՆՈՒԷՐՆԵՐ

1909, 10, 11 ՇՐՋԱՆՆԵՐՈՒ

1030 զրշ. Նէմի Զատէ Սապրի պէյ, Դաւիթօֆ Յասմիկ և Դաւիթ: — 515 զրշ. Դաւիթօֆ Իսկուհի: — 309 զրշ. Դազարոսեան Վահան, Զիւլթուրուօ ձոֆա: — 206 զրշ. Լեփեան Նոյմազար, Ֆերմանեան Մկրտիչ: — 103 զրշ. Դավաֆեան Արսէն, Զարմանեան Եղրարք, Սինոյեան Ոսկիան, Պալազեան Վարդապետ: — 95 զրշ. Քիթոյեան Սեդրակ: — 57 զրշ. Տոքթոր Ֆէտէր: — 51 1/2 զրշ. Փափաղեան Նշան: — 50 զրշ. Քանի մը Տիկիններ և Օրիորդներ: — 40 զրշ. Սրապեան Կատարինէ: — 38 զրշ. Սերթիլեան Սարգիս: — 30 զրշ. Տիգրանեան Եւպրատ: — 27 1/2 զրշ. ձիւնեան Զարուհի: — 25.75 զրշ. Դարակիւլեան Յասմիկ, Տիւղեան Վահան: — 24 զրշ. Տիգրանեան Նազնիկ, Շամլեան Փառանձեմ: — 22 1/2 զրշ. Ներսէսեան Վերգինէ, Նշկեան Մարինէ: — 20 զրշ. Madame Merlos: — 19 զրշ. Դաւիթօֆ Դաւիթ, Սրապեան Տիգրան, Անցորդ մը, Սարաֆեան Սաթենիկ, Երկանեան Արտաշէս, Երկանեան, Լեփեան Ռուբէն, Խերպէկեան Մարտիրոս, Խպէեան Միհրան, Հանէսեան Եղրարք, Ղոյինեան Գրիգոր, Մեսրիկեան Մուշէղ, Յակոբեան Արամ, Նաճարեան Վահան, Զիլինկիրեան Թագէտ, Պէզազեան Խաչիկ, Սարաֆեան Ռու-

(1) Նախապէս 24 զրշ. վնարած է:

(2) » 24 » »

(3) » 24 » »

(4) » 24 » »

րէն, Տիգրանեան Գառնիկ, Բամպուքեան Արտաշէս: — 16 1/2 զրշ. Դազիկեան Էլիզ: — 12 զրշ. Համարեան Սարգիս: — 10 զրշ. Խաղիսաղեան Աթլաս, Պաղտատեան Հանրմ, Պամաճեան Վարդ, Սոլաքեան Ռերեկա, Սէֆէրեան Սաթենիկ, Ֆերահեան Ագապի, Դաւիթօֆ Գայիանէ: — 9 1/2 զրշ. Տէր-Աղարեան Սահակ, Զաքարեան Սիմոն, Քրմոյեան Սօֆի: — 8 զրշ. Բանդատեան Վարդան, Գաթրճեան Նարդուհի, Դարբինեան Կիւլիզար, Հանէսեան Եագութ, Հալէպեան Մաքրուհի, Դէնէվիւզեան Իսկուհի, Մաղմանեան Իսկուհի, Փոքլորեան Մարթա, Տէր Սարգիսեան Վառվառ: — 7 զրշ. Հանէսեան Եագութ: — 6 զրշ. Բարանեան Ֆիլորիցա, Բանդատեան Լուսավարդ, Երկանեան Ասանէթ, Իջգալայեան Զարուհի, Դազիկեան Սրմա, Դազիկեան Հռիփսիմէ, Միրիճանեան Դշուհի, Սապոնճեան Էլմաս, Բամպուքեան Երանուհի, Աւոյեան Սրբուհի: — 5 զրշ. Ալթունեան Գարեգին, Աթուռակայեան Բարունակ, Ապտալեան Հաճիգիւլ, Բրուտեան Աննա, Գարբիէլեան Մարիցա, Լուսիկեան Փերրոնէ, Խալլօղլուեան Գենովարէ, Ամպարեան Նարդուհի, Մետինեան Նազնիկ, Միրոյեան Լուսիկ, Պետրոսեան Լուսիկ, Սոլաքեան Երանուհի, Սարոյեան Սօֆիա, Վասիլեան Սաթենիկ, Տէր-Ղուկասեան Վերոնիքա, Պորիկեան Սէլվի, Ոմն, Գաթրճեան Աննա, Ապտալեան Հաճիգիւլ, Ոմն, Կէօկիւլեան Ոսկիգիւլ, Ոմն, Աստուրեան Գեղամ, Երմոյեան Մուշէղ, Ճանճիկեան Վահան: — 4 զրշ. Մալոյեան Եղիսարեթ, Սոպաճեան Շամիրամ:

ՀԱՆԳՍԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Տ. Նազարէր Մոսիսեանի միջոցաւ

Եօղկատի մէջ 540 զրշ., Բուժուէյինի մէջ 70, Զօրուժի մէջ 78.25, Փէօճրէօկի մէջ 70, Պէպէքի մէջ 95, Սարը Համալայի մէջ 197.25, Ազտաղ Մատէնի մէջ 142: — Ընդհանուր գումար 1192 զրշ.:



ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՇԵԱՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ

1910 -

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋ

Թիւ	Քաղաք կամ գիւղ	Դասընթաց	Թիւ Աշակեր- տներ	Թիւ Ու- սուցչաց եւ Պաշ- տոնիւց
1	Մուշ	Մեկ. Տար. Միջ. եւ Բարձր. ցախ.	300	15
2	Կոփ (Պուլանք)	Տար. ցախ.	20	3
3	Շրնիփ (Սասուն)	» »	14	1
4	Մանազկերտ	» »	40	2
5	Հազգո	Տար. միջին	70	3
6	Կարին	Վարժունահանոց	20	14
7	Օձնի	Տար. ցախ.	150	3
8	Զիքոյ	» »	150	4
9	Թուանջի	» »	40	1
			804	46

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

ԿԻՆԻՄԱՆՈՑ ՄԻՋ

- 1912

ԿԻՆԻՄԱՆՈՑ ՄԻՋ

Թիւ	Քաղաք կամ գիւղ	Դասընթաց	Թիւ Աշակեր- տներ	Թիւ Ու- սուցչաց եւ Պաշ- տոնիւց
10	Զեյթուն (Ուլնիա)	Մեկ. Տար. Միջ. եւ Բարձր. ցախ.	150	11
11	Կապան	Տար. ցախ.	50	2
12	Ֆոնուկ	» »	40	1
13	Ալախբաք	» »	70	1
14	Եփեսոս	» »	60	2
15	Ասանա	Տար. Միջ. Բարձր.	(Այս վարժարանն իրականում է բն. ուսուցիչներով)	
16	Պաղչե	» »	40	1
17	Խառնի	» »	32	1
18	Հասան Պեյլի	» »	95	3
19	Էօզերի	» »	98	2
20	Տեօրթոյ	Տար. Միջին եւ Բարձր. ցախ.	105	1
21, 22, 23	Հանրն (Կեդրոն Ս. Աճ.ին. Ս. Թրս.)	Մեկ. Տար. Միջ. եւ Բարձր. ցախ.	600	14
24	Թալաս	Մեկ. Տար. Միջ. եւ Բարձր. ցախ.	232	8
25	Դարասուրան	Տար. ցախ.	60	1
			1632	48
ԿԻՆԻՄԱՆՈՑ ՈՐԲԱՆՈՑ ԴՊՐՈՑՆԵՐ				
26	Մարաշ	Նախակրթարան		
27	Տեօրթոյ			
28	Հասան Պեյլի			
29	Ալախբաք			
30	Հանրն			

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ՄՇՈՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ


Հայաստանի սրտին վրայ բաշտում Մշտյ վարժարանը (մանկապարտեզ, տարր., միջին և բարձր. նախալրթարան), ուր դաստիարակվել են կ'ստանան աւելի քան 300 զուգադասակի Հայուհիներ, Գործ. Ժողովիս պաշտօնավարութեան երկամեայ շրջանին ենթակուցաւ տեսչական և ուսուցչական փոփոխութեան մը, տեսչուհի Օր. Զիլմանի հեռացումով: Գործ. Ժողովիս համար դարձողական տարեշրջանի կիսուն, անկարելի ըլլալով կեդրոնէս մասնաւոր տեսչուհի մը ուղարկել, հարկ եղաւ վարժարանը կառավարել ուսուցչական մարմնի մը առժամեայ հսկողութեամբ, որուն անդամակցութեան յարմար նկատուեցան Միացեալ Ընկ. և տեղւոյն Ներսէսեան վարժարանի աւագ ուսուցիչ Պ. Գ. Մարգարիտունի, Պ. Հ. Համամճեան և Տիկին Վ. Միրիճանեան:

Ընկերութիւնս Մշտյ մէջ ներկայացուցիչ ունեցաւ Խարախանեան Սրբազանը: Տեղացիք Ընկերութեանս վարժարանին օժանդակել խոստացած են տարեկան 3000 դրշ.ի մասնակցութեամբ, և սակայն ցաւալի է ըսել թէ հակառակ կեդրոնիս շարունակական դիմումներուն, կարելի չէ եղած այդ յանձնառութեան իրագործումը:

Այս վարժարանը ունի իր մանկապարտեզը, նախալրթարանը, տարր. միջին և բարձր. դասընթացքներով: Այս վերջին դասընթացքին մէջ գրեթէ անկարելի կը դառնայ աշակերտութիւնը ունենալ դոհացուցիչ թիւով, և մեզ հասած տեղեկադիրներ զգոհութեամբ կը տեղեկագրեն թէ՛ տեղացիք տարուած տեղական սովորութենէ մը, իրենց զաւակները կը քաշեն դպրոցէն, ամուսնացնելու և կամ դաշտային աշխատութեանց նուիրելու համար: Աւելորդ է ըսել թէ Ընկերութիւնս իր նպատակը հետապնդելով՝ ստիպումով և համոզումով ջանացած է միշտ զանոնք վերադարձնել վարժարան, ծրագրին տրամադրած ամբողջ ուսումնները տալու համար անոնց:

Իսկ Կոթի և Շընիֆի գիւղական վարժարանները տարրական պարզ նախալրթարաններ են, ուր եւս ի գործ կը դրուի Ընկերութեանս

ՕՅՆԻՒՆ ՎԱՐԺԱՐԱՆ



կրթական ծրագիրը, ցաւալի է ըսել, չառ զժուար պայմաններու տակ, առ ի չգոյէ նպաստաւոր զպրօցական շէնքի մը: Այս մասին Մշոյ վարժարաններու հսկող մարմինէն մեր ստացած տեղեկագրէն ցաւով կ'իմանանք թէ Շընքի աշակերտութիւնը «ծալապատիկ կը նստին»: Ուր էր թէ, հրա Ընկերութիւնս ստանձնած է այսօրինակ մութ խորչերու մէջ կրթութեան բարիքը ծաւալելու պարտականութիւնը, գտնուէին բարերարներ, որոնք օժանդակէին Ընկերութեանս, նպաստաւոր և մանաւանդ առողջապահական պայմաններու մէջ ընծայելու իր զոհարարումը:

ՀԱԶԱՐՈՅԻ ՎԱՐՓԱՐԱՆ

Հազգոյի մեր վարժարանը նահապետական ոճով կառուցուած հին շէնք մըն է, խարխուլ վիճակով: Հազգօ կը բաղկանայ քրթախօս Հայերէ, և Ընկերութիւնս հոն վարժարան մը բանալով՝ իրեն նպատակ ունեցած է ազատագրել զանոնք տոհմային այլասերումէ: «Աշակերտութիւնները, կը զրէ վարժարանին աւագ-ուսուցչուհի Տիկ. Ա. Մուրատեան, վերջին ծայր ջանասէր են ու նախկին Հայուհիներու տիպարը ներկայացնող արտայայտութիւն մը ունին, ինչպէս նաեւ ձիրք ու յարմարութիւն, լեզուին փոխելէ վերջ տիպար Հայուհի մը դառնալու»:

Աշակերտութիւններուն առողջապահական վիճակը նախանձելի ըլլալէ շատ հեռի է զժրախտաբար, որովհետեւ բժիշկ և դեղ կը պակսի զիւղին մէջ, որ Բաղէշէն և Մուշէն հեռու, անձանօթ անկիւն մը մեկուսացած է, և ամենաչնչին հիւանդութիւններէ խակ հարիւրաւոր մեռնողներ անպակաս կ'ըլլան միշտ:

Այս վարժարանը կը մատակարարուի տեղացիներէ բաղկացեալ հսկող մարմինի մը միջոցաւ, ներկայացուցիչ ունենալով Մ. Կարապետեան էֆէնտին: Տիգրանակերտէն Մկրտիչ էֆ. Մեղրիկեան ևս աղնուաբար կ'օժանդակէ Ընկերութեանս, Հազգօ ուղարկուելիք զրամական և այլ առաքումները իր միջոցաւ կատարելով:

ՕՁՆԻԻ, ԶԻԹՈՂԻ ԵՒ ԹՈՒԱՆՁՔԻ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐ

Կարնոյ չրջանակին մէջ գտնուող այս տարր. նախակրթարանները կը գտնուին տեղական մեր մասնաճիւղին անմիջական հսկողութեան տակ, ուր, աւելորդ է ըսել, զիւղական համատ պայմաններու յարմարցուած դաստիարակութիւն մը կ'ստանան տղաք:

ԶԵՅԹՈՒՆԻ ԵՒ ՇՐՁԱԿԱՅԻՑ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐ

Ուղիւոյ վարժարանը նախակրթարան մըն է, իր բարձր. միջին և տարր. բաժանումներով, նաեւ մանկապարտէզով որ հաստատ-



ուած է Պօղ-Պայիր թաղին եկեղեցւոյն նորաշէն սենեակնե-
րուն մէջ:

Զէյթունի մէջ Ընկերութիւնս ներկայացուցիչ ունեցաւ տեղւոյն
Առաջնորդ Գեր. Տ. Վաղարշակ վարդապետը, որ մեծագոյն սատարը
եղաւ տեսչուհի Օր. Զարուհի Փէշտիմալճեանի, Ընկերութեանս կրթա-
կան գործը ըստ կարելոյն արդիւնաւորելու համար: Օր. Փէշտիմալ-
ճեան եռանդուն և գնահատելի պաշտօնավարութեամբ մը լիովին
պսակեց Ընկերութեանս զոհողութիւնները, և ինչ որ ուրախալի
պարագայ մըն է, Ընկերութիւնս իր վերակազմութենէն վերջ, ունեցաւ
իր անդրանիկ չըջանաւարտուէիները Զէյթունէն:

Օր. Փէշտիմալճեանի տեսչութեան տակ կը գտնուէին նաեւ
Կապանի, Փոնուզի, Աշլխարանի և Եփեսոսի վարժարանները, որոնց
իւրաքանչիւրին մասին Օր. Տեսչուհւոյն հաղորդած տեղեկագիրներէն
հաճոյքով կը տեղեկանայինք թէ վարժարանները իրենցմէ ակնկալուած
արդիւնքը ունեցած են:

Կապան Զէյթունէն 16 ժամ հեռաւորութեամբ հաճելի գիրքով
գիւղ մըն է, պատուական բնակիչներով. իսկ Փոնուզ Զէյթունէն 8
ժամ հեռաւորութեամբ Կապանի և Ուլնիոյ մէջ. Աշլխարան ալ Զէյ-
թունէն 18 ժամ հեռաւորութեամբ դէպ ի հիւսիս, թրքաշատ գիւղա-
քաղաք մը: Օր. Փէշտիմալճեան որ ծախահարկի յանդուրժեամբ մը
այս սարերը կը կտրէր կ'անցնէր՝ հրահանգներ տալու համար ենթակայ
վարժարաններու պաշտօնէութեան, 912 մայիս 7 թուակիր իր մէկ
տեղեկագրին մէջ սապէս կը գրէ. —

«Կապանէն հիմայ դարձայ ձիւնապատ լեռներու տաժանիկի ճամ-
բորդութենէ մը ետք, ուր գացեր էի ամալիքի քննութիւնը ընելու.
արդիւնքը շատ գոհացուցիչ էր, 8 ամսուան կարճ ժամանակամիջոցին
բաղդատմամբ, տեսնելով էր այն թրքախօս պղտիկները 8-10 հիւսք
մաղերով, որոնք չնորհալիօրէն սանտրուած, մաքուր գրասեղաններու
առջեւ նստած՝ աշխարհաբար կարդալու և գրելու զբաղած էին:
Հապա՛ չինած ձեռագործներն. աժուռ թաշկինակները. իրա՛ւ որ ես
չկրցայ արցունքներս զսպել: Եկեղեցիին մէջ գոհարանական աղօթք-
ներ կ'ընէին Հայուհեանցին համար»:

Զէյթունի վարժարաններու վրայ խօսած ատեննիս, չենք կրնար
չիլիկ չնորհակալութեամբ անունը Գուրգեան էֆ.ի, որ Մարաշէն
ազնուաբար ստանձնած էր մեր զրամական և այլ առաքումները
կատարելու հոգը:

ԱՏԱՆԱՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐԸ

Կիլիկիան ծանօթ եղեռնէն վերջ, Ընկերութիւնս փութացած էր
ստանձնել նաեւ Ատանայի ազգ. աղջկանց վարժարանին կառավա-

րութեան հոգը: 911 մայիսին սակայն, տեղւոյն Թաղ. Խորհուրդը կը
յայտնէր թէ, Ատանայի ազգ. սնտուկը պարագաներու փոփոխման
չնորհիւ, այլեւս ի վիճակի ըլլալով իր միջոցներով հոգալու ամբողջ
վարժարաններուն պիւտճէն, տեղացիք պիտի կրնային այնուհետեւ
ստանձնել և ապահովել ազգ. աղջկանց վարժարանին հսկողութիւնը և
կառավարութեան հոգը, այսպէսով առիթ մը եւս տալով Ընկերու-
թեանս Ատանայի վիճակէն ա'լ աւելի կարօտ և աղջկանց վարժարան-
թեանս Ատանայի վիճակէն ա'լ աւելի կարօտ և աղջկանց վարժարան-
ներէ դուրի գիւղերու և թեմերու մէջ հաստատելու վարժարաններ,
վերջիններուն յատկացնելով Ատանայի այլ եւս բարեբախտաբար
պէտք չունեցած նիւթական և բարոյական զոհողութիւնը. զոհողու-
թիւն, որուն պէտք ունէին մեծապէս, աղէտեալ կարգ մը հայ գիւղեր:
Թիւն, որուն պէտք ունէին մեծապէս, աղէտեալ կարգ մը հայ գիւղեր:

Ատանայի վարժարանին մեր նախորդ ներկայացուցիչ Միհրան
էֆ. Քէշիշեան այս չըջանին եւս շարունակեց ընձեռել Ընկերութեանս
իր օժանդակութիւնը յարմար առիթներու մէջ: Իսկ, իսկէնտէրունէն
Տեարք Խաչատուրեան Եղբարք յանձն առին ազնուաբար զրամական
և այլ առաքումներ կատարել, վերոյիշեալ վայրերուն յատուկ:

ՏԵՕՐԹ ԵՕԼԻ ՎԱՐՓԱՐԱՆ

911-912 տարեյրջանին համար, Տէօրթ Եօլի Թաղ. Խորհուրդը
կը խնդրէր Ընկերութենէն տեսչուհի մը տարեթուակը վճարել, պար-
զելով տեղւոյն մէջ առաջ եկած անտեսական տագնապը: Գործ.
գիւղով տեղւոյն մէջ առաջ եկած անտեսական տագնապը: Գործ.
ժողովս նկատողութեան առնելով որ Տէօրթ Եօլի ժողովուրդը արժանի
է այս զոհողութեան, յարմար դատեց մէկ տարուան համար ստանձ-
նել այդ հոգը, իբր տեսչուհի՝ հոն ղրկելով՝ իր կարողագոյն ոյժերէն
մին՝ Օր. Զապէլ Բարադամեան:

ՀԱՃՐՆԻ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐ

Հաճրնի մէջ կան երեք աղջկանց վարժարաններ, իրարմէ բաւա-
կան հեռու, քանի որ երեք եկեղեցիներու ժողովուրդը, տեղւոյն
գիրքին բերմամբ բաւական հեռու կ'ապրէ, և կարելի չէ զանոնք
ի մի հաւաքել, մանաւանդ որ այնքան մեծ չէնք մըն ալ չկայ:

Գործ. ժողովս պաշտօնավարութեան միջոցին, տեղւոյն Կաթ.
Փոխանորդ և Ընկ.եանս ներկայացուցիչ Սարաճեան վարդապետի
տեղեկագիրներէն հասու ըլլալով որ, մեր վարժարաններուն կրթական
վիճակը բարեփոխման և պիւտճէի յաւելման կը կարօտի, անմիջապէս
նկատողութեան առնելով այդ պարագան, հարկ տեսնուեցաւ տեսչա-
կան փոփոխութիւն մը ընել. ուստի կեղրոնէս ուղարկուեցաւ հմուտ
և փորձ մանկավարժ ուսուցչուհի մը՝ Օր. Փերրոնէ Մադնիսալեան,
որ ցարդ ձեռնհասօրէն կը պաշտօնավարէ: Ինչպէս յայտնի է, Հաճրն
իր բազմամարդ բնակչութեամբ, Ատանայի նահանգին աղքատ

քաղաքներէն մէկն է, և վերջին Կիլիկիան տրհաւիրքին տուած է 3000 զոհեր, թողլով հաղարաւոր որբեր և այրիներ: 912 Յունիսին, Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսը իր Հաճոյն աշցելութեան առթիւ բարեհաճեցաւ պատուել Ընկերութեանս վարժարանները և իր օրհնութիւնները ընծայել Ընկ. ևսանս վարիչներուն, որուն համար քաղցր պարտականութիւն մը կը համարինք մեր չնորհապաշտութիւնն ու երախտագիտութիւնը յայտնել Նորին Ս. Օծութեան:

ԹԱԼԱՍԻ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐ

Վարդ-Պատրիկեան վարժարան եւ Ազգանուէր Հայունեաց Ընկ.եան մանկապարտեզ. — Վարդ-Պատրիկեան վարժարանը կը մատակարարուի Ադն. Կիւլպէնկեան եղբարց ծախքով, Ընկերութեանս հովանաւորութեան ներքեւ, իբր ներկայացուցիչ ունենալով տեղւոյն պատուաւոր ազգայիններէն Արսէն Էֆ. Գալֆայեանը որ դնահատելի հոգատարութեամբ մը աջակցեցաւ Գործ. Ժողովիս, իր պաշտօնավարութեան երկամեայ չրջանին: Այս վարժարանը եւս ենթարկուեցաւ տեսչական փոփոխութեան և 911-12 տարեշրջանին կեդրոնէս ուղարկուեցաւ իբր տեսչուհի Պոլսոյ Նիկողոսեան աղջկանց բարձր. վարժարանի փալլուն չրջանաւարտուհիներէն Օր. Եւգլինէ Կիւրճեանը, (այժմ Տիկին Արայ Մամիկոնեան), որ ունեցաւ բարեւոք պաշտօնավարութիւն, զոհ թողլով որքան Ընկերութիւնս, նոյնքան ալ վարժարանին հիմնադիրբարերար Կիւլպէնկեան եղբայրները:

Թալասի մանկապարտեզն ալ ունեցաւ ուսուցչական փոփոխութիւն և հոն ուղարկուեցաւ Տիկ. Փառանձեմ Գէրթմէնեան:


Ինչպէս Ընկերութեանս նախորդ տեղեկագրով ըսուած է, տեղւոյն թաղ. Խորհուրդը կը հոգայ այս մանկապարտեզին ծախքերէն մաս մը:

ԳԱՐԱՏՈՒՐԱՆ

Գարատուբանի վարժարանին բացումը տեղի ունեցաւ 912 փետրուարին: Ընկերութիւնս հոն ներկայացուցիչ ունի Գաղազեան Յովսէփ Էֆէնտին: Վարժարանին յատկացուած չէնքը այդ չրջանին համար եկեղեցւոյն բակին մէջ բարձր ու կոկիկ վերնասրահ մըն էր: Ուսուցչուհին Տիկ. Ուլսաննա Թիթեղեան Այնթապի ամերիկեան աղջկանց քօլէժին յաջողագոյն աշակերտուհիներէն է և քիչ ատենուան մէջ ունեցաւ բաւական դոհացուցիչ պաշտօնավարութիւն:

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՎԱՐՓԱՐԱՆ

Այս վարժարանը բացուած ըլլալով տարեշրջանին վերջը, այդ մասին պիտի խօսուի յաջորդ տեղեկագրով:



ԽՈՒՄԱՆՈՒՄԻ ՎԱՐՓԱՐԱՆ

ԿԻՆԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ-ԴՊՐՈՑՆԵՐ

Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողովին հետ կնքուած պայմանագրութեան մը համաձայն, Ընկերութիւնս տարեկան 150 ռսկէոյ գումարի մը վճարմամբ ստանձնած է նոյն Յանձնաժողովին մատակարարած որբանոցներուն մէջ պատասխարուած որբուհիներուն կրթութեան հոգը: Այս որբանոցները հաստատուած էին Մարաշի, Տէօրթ-Եօլի, Հասան-Պէյլի, Այնթապի և Հաճնոյ մէջ. բայց նոյն Յանձնաժողովին վերջին մէկ կարգադրութեամբ, այս որբանոցները այժմ երեքի վերածուած են, և կեդրոնացած՝ միայն Մարաշի, Հասան-Պէյլի և Հաճնոյ մէջ: Մարաշի որբանոցին աղջկանց բաժնին տեսչութիւնը կը վարէ Պոլսէն զրկուած Օր. Սօֆի Շիշմանեան, որ մայրական հոգածութիւն մը ունի որբուհիներու վրայ և մասնաւորապէս կը հսկէ անոնց ձեռագործի ուսուցման: Մարաշէն կեդրոնիա զրկուած նուրբ ասեղնագործութիւնները, արդիւնք որբուհիներու ձեռական աշխատութեանց, գնահատուելով Ընկերութեան անդամուհիներուն կողմէ, 1912ին Գընպլըի մէջ սարքուած վիճակահանութեան համար գործածուեցան:

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Մուշի վարժարան. — Օր. Իսկուհի Զիքնեան ⁽¹⁾ Տեսչուհի, Տիկ. Վ. Միրինեան, Տիկ. Ա. Պեպեհեան, Տիկին Գ. Տէր Յովնանեան, Տիկ. Ս. Անդրեասեան, Տիկ. Ի. Աբահամեան, Օր. Ս. Պօզուկեան, Օր. Ա. Մալխաս, Օր. Ս. Սկլուհի, Պ. Հ. Համամեան, Պ. Գ. Մարգարէսուհի, Պ. Մ. Նալպանեան:

Շընիֆի վարժարան. — Տիկ. Լ. Տ. Վարժապետեան:

Կոյի վարժարան. — Տիկ. Ա. Նալպանեան, Տիկ. Մ. Գասոյեան:

Օձնի վարժարան. — Օր. Պ. Պեպիւրեան, Օր. Լ. Նամայեան:

Զիքոյի վարժարան. — Օր. Տ. Պարոնեան, Օր. Շ. Տէր Սարգսեան, Տիկ. Ա. Բերդեան:

(1) Օր. Իսկուհի Զիքնեան (այժմ Տիկ. Գառմէն) վարժարանին տեսչութիւնը վարեց մինչեւ 911ի շրջանի լրանալը. 912ին իրեն յաջորդեց Տիկ. Ս. Տէր Ստեփանեան որ ունեցաւ միայն 5 1/2 ամսուան պատշտակաւորութիւն:



Թումանյանի վարժարան. — Օր. Բ. Կոպելեան :

Հազոյի վարժարան. — Տիկ. Ա. Մուրաքեան, Օր. Մուրաքեան :

Զեյթունի վարժարան. — Օր. Զ. Փեռսիմանեան Տեպուհի, Տիկնայք՝ Եղուպեան, Սեդրեան, Գարագուշեան, Գարիպեան, Օրիորդ՝ Մինասեան, Դասպարեան, Դուգուրեան, Պ. Պ. Ահարոնեան, Եղուպեան :

Աշխարհի վարժարան. — Տիկ. Էրզրումեան :

Եփեսոսի վարժարան. — Տիկ. Մամիկոնեան, Տէր Ներսէս :

Ֆոնուզի վարժարան. — Տիկ. Շանլեան :

Կապանի վարժարան. — Տիկնայք՝ Դարաբեան, Դարանձիլեան :

Հանքի վարժարաններ. — Օր. Մադրասպեան ⁽¹⁾ Տեպուհի, Տիկնայք՝ Եօրենեան, Թամամեան, Ընդեան, Սղվեան, Պարդանեան, Ղալապրեան, Մելիսոնեան, Օրիորդ՝ Հասեան, Կանաչեան, Դուլումեան :

Տեքթեղի վարժարան. — Օր. Զ. Բարադամեան ⁽²⁾ Տեպուհի :

Էօզեղի վարժարան. — Օր. Բ. Էօպեանեան :

Պաղայի վարժարան. — Օր. Ն. Կուզուկեան :

Խառնի վարժարան. — Օր. Մ. Կուզուկեան :

Թաշաի վարժարան եւ մանկապարտեզ. — Օր. Բ. Կիւրեան ⁽³⁾ Տեպուհի, Դնանեան, Նահապետեան, Էսեան, Տիկնայք՝ Սքամպոլլուեան, Քերքմեան :

Դարասուրանի վարժարան. — Տիկ. Ա. Թիքեղեան :

ՎԱՐԺՈՒՀԻՆՈՑ

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՇԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԱՐԻՆ

Ազգ. Հայունհաց Ընկ.եան Կարնոյ Վարժուհիները, հաստատուած 1910 թուականին, Գործ. Ժողովիս պաշտօնավարութեան օրով բոլորեց երկու տարեշրջան, Ընկերութեանս Կարնոյ մասնաճիւղին անմիջական հսկողութեան ներքեւ :

Ուսումնական ճիւղին Տեսչութիւնը կը վարէր Սանասարեան վարժարանի ուսուցիչներէն Արուսեան Էֆ., զլուրը անցած ուսուցչական կազմի մը, որ կը բաղկանար զխաւորաբար Սանասարեան վարժարանի ուսուցիչներէն :

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Տեսւրք եւ Տիկնայք

Արուսեան Գեորգ	Յակոբեան Արամ
Արքինա Եւնիկէ	Պապայեան Խոսրով
Արծրունի Արսէն	Տէսեան Աղաւնի
Թերզեան Քաջբերունի	Տէսեան Մանուկ
Կարապետեան Գալուստ	Բամպուկեան Պողոս
Կիրակոսեան Հայկանոյ	Օսապաւեան Հայկանոյ

ՄԵԱՅՈՒՆ ՀՍԿՈՂ

Քեօմիւրեան Փեփրոնէ Ռափայեղեան Մկրտիչ

Վարժուհիները ունեցաւ երկու տարուան դասընթացք, որուն հետեւեցան 21 աշակերտուհիներ, որոնց 19ը՝ Կարնեցի, 1ը՝ Ակնցի եւ 1ն ալ Վանեցի : Ասոնցմէ 11ը միայն պայմանագրուած էին Ընկերութեանս հետ մեր վարժարաններուն մէջ պաշտօնավարելու համար. մնացեալները ազատ էին :

Մասնաւոր ծրագրի մը համաձայն, աշակերտուհիներուն աւանդուեցան, մանկավարժական դրութեամբ, Եկեղեցական Պատմ., Հայերէն, Թուրքերէն, Յրանալերէն, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուարանութիւն, Բնագիտութիւն, Գեղագրութիւն, Գծագրութիւն, Մարմնամարզ, Երգ, Տնտեսագիտութիւն, Կարուծեւ ու Զեւագործ :

⁽¹⁾ 910-911 ի եղանին այս պաշտօնը վարած է Օր. Վ. Մամիկեան :

⁽²⁾ Ընկերութիւնս տեսչուհւոյ մը տարեթուակը վնարած է միայն :

⁽³⁾ Առաջին եղանին այս պաշտօնը վարած է Տիկ. Մ. Կիւլպէնկեան :

Վարժուհիները 912 տարեշրջանին ընծայեց հետեւեալ չրջանա-
ւարտ օրիորդները, որոնցմէ ճը ներկայ դպրոցական տարեշրջանին
պաշտօն առած են Լճկերութեանս զանազան վարժարաններուն մէջ:

ԱՆՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՂԵԱՅ

Արաքսի Մազմանեան	Հրանոյց Սկիւնեան
Զարուհի Ալբերեսեան	Մանուշակ Հայրապետեան
Զարուհի Փուփիկեան	Յուլիանէ Նալպանեան
Էլպիա Դարբինեան	Յուսիանէ Նալպանեան
Լուսաբեր Քորոյեան	Նուարդ Ղենեկիւզեան
Լուսվարդ Էլպէկեան	Նազենիկ Կօսնեան
Լուկրէք Քերգեան	Շուշանիկ Աւետիսեան
Համասփիւռ Քերոբեան	Սիւրանոյց Տոկոյեան
Հռիփսիմէ Մանուկեան	Վարսենիկ Դալգանեան
Հեղինէ Պարոնեան	Տիգրանուհի Նալպանեան
Զարուհի Մարանկօզեան	

ՎԵՐՋԱԲԱՆ

Ահա՛ զլիաւորաբար այն դորձառնութիւնները, զորս ունեցաւ
Գործ. Ժողովս իր երկամիայ պաշտօնավարութեան չրջանին, 74 օրի-
նաւոր նիստերու մէջ, որոնցմէ 7ը իր Խորհր. Յանձնախումբին հետ:
Գործ. Ժողովս, ըստ Լճկերութեանս հիմնական կանոնագրին,
իր դորձառնութեանց մանրամասն համարատուութիւնը տուաւ պար-
բերաբար Լճի. Ժողովին, որ 1912 Յուլիս 5ի իր Ժ.Ի. նիստին մէջ,
մեր պաշտօնավարութեան լրման առթիւ Գործ. Ժողովիս հրաժարա-
կանը ընդունելով՝ ընտրեց մեր յաջորդը, որուն փոխանցեցինք 30
վարժարաններու խնամքը, ինչպէս նաեւ կարեւոր գումար մը, (տես
Դ. հաշուեկիւղ):

Այս առթիւ հաճելի պարտականութիւն մըն է մեզի համար
սրտագին շնորհակալութիւն յայտնել ամէն անոնց, որոնք նիւթապէս
կամ ըստոյապէս աջակից եղան Գործ. Ժողովիս, կատարելու համար
այն դժուարին պաշտօնը, զոր մեզի վստահելու պատիւը ըրած էր
Լճկերութեանս Լճի. Ժողովը:

Գործադիր Ժողովոյ

Ասեմադպիր

Ասեմապէս

ՀԱՅԿԱՆՈՅԵ ՄԱՌՔ

Զ. ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ

ԳԻՒՄ.Ն ՀԻՄՆԱԳԻՐ ԺՈՂՈՎՈՅ

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համարակալ
ԼՈՒԿԱ ՂԱՅԱՍՈՒՄԱՆ
Բ. ԾՆՊՈՐԹԻՆ ԴՈՂՈՂՈՍ Կ՛ՍՏՈՐԱՊԵՐԻՐ
Հաշունկցեմ
Բ. Տ. ԱՅԻՄԱՆ
ԿՈՆԴԱԿԻՍ
ԼԵԿՈՆ ՏԵՄԻԶԻԱՍԱՆԵՐԱՆ

ՀԱՇՈՒԵԿՇՈՐ Գ. ՇՐՋԱՆԻ
1910-1911

ՀԱՍՈՅԹ ԵՒ ԾԱԽՔ Դ. ՇՐՋԱՆԻ

1 Հոկտ. 1911 և 30 Յուլիս 1912

ՀԱՍՈՅԹ

ԾԱԽՔ

	Ղրգ.		Ղրգ.
Կեղրոնի ամսավճարներէ	25226	Տէօրթ-Եօլի վարժարանի	9720 96
Նուիրատուութենէ	16842	Մուշի վարժարաններու	21318 75
Աղերսանդրիոյ Մասնաճիւղէ	27170	Հաճընի վարժարանի	18399 38
Պէլլուքի Մասնաճիւղէ	2128	Ջեթունի վարժարաններու	22317 —
Իզմիրի Մասնաճիւղէ	6480	Թալասի վարժարանի	21337 82
Պուրթէշի Մասնաճիւղէ	4409	Կարնոյ վարժարաններու	36338 —
Թալասի Մասնաճիւղէ	760	Ատանայի շրջակայ վարժա-	
Հ. Բ. Ը. Միութենէ	5400	րաններու	8267 63
Մուշի Մասնաճիւղէ	2376	Հազգոյի վարժարանի	4657 —
Մարքիզիւղի Կիլիկ. Որբախնամ		Կիլիկեան Որբնց. դպրոցներու	10800 —
Կանանց Ընկերութենէ	7560	Մանագիկերաի վարժարանի	810 —
Իզմիրեանց Կտակի Հոգաբար-		Գարատուրանի վարժարանի	324 —
անութենէ	2160	Ջուազործի նիւթեր	1140 75
Գահիրէի Հայուհեաց Միութենէ	715 75	Վարժուհիներու ճամբու ծախս	4380 —
Պարահանդէսէ (զուտ հասոյթ)	79963	Գիրք եւ գրենական պիտոյք	5477 50
Տոկոսէ	7861 94	Հաւաքչին տասնորդ եւ տարե-	
Տէօրթ-Եօլի տեղական նպաստ	2592	թոշակ	9014 —
Մուշի տեղական հասոյթ	1527	Կեղրոնի ծախս	18203 75
Թալասի Թաղական Խորհրդոյ		Հասութից առաւելութիւն	23956 39
նպաստը	2700 03		
Կարնոյ տեղական հասոյթ	13626 —		
Ջեթունի տեղական հասոյթ	1565 —		
Դասագրքերէ գոյացած հասոյթ	2241 71		
Նախորդ շրջանէ Մշոյ Վրժնց-			
ծախուց առաւելութիւն ըլ-			
լալով ի հաշիւ	169 50		
Անցեալ տարուան պարահան-			
դէսէ մնացած հին կառքի			
մը փոխարժէքը	324 —		
Դրամի տարբերութենէ շահ	71 —		
Երկրորդ շրջանի հաշուական			
տարբերութենէ գոյացած			
պահանջը ըլլալով զանձուած	2592 —		
	216462 93		216462 93

Համարակալ
ԼՈՒԻՋ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Դամնապէս
Բ. Տ. ԱՃԷՄԵԱՆ

Ի ճշտութիւն հաշուոյս կ'ստորագրեմ

Հաշուաւոր
ԼԵՒՈՆ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0212587

42.670